




ԱՍՏՎԱԹԱՇՆՁԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ա. Ի. Ա. Կ. Ք. Ս Ո Ղ Ո Մ Ո Ն Ի

Կին ժրագլուխ երէ գտանիցի, պատուականագոյն է այնպիսին Բան զականս պատուականս: Վստան է ի նա սիրտ առն իւրոյ. այնպիսին աւարաց երբեք ոչ կարօտասցի: Գործակից է առն իւրում ամենայն բարեաց կենաց՝ և ոչ չարեաց: Գտնալ ասր և կտա՝ արար անօրս պիտանիս ձեռօք իւրով: Եւ եղև իբրև զնա շահաբեր. ի հեռաստանէ ժողովէ իւր գանձս: Յառնէ ընդ արշալուրջս, և տայ կերակուր ընտանեաց, և գործ նաժըտաց: Տեսանէ զանդ զեղեցիկ՝ և գնէ զնա, և ի պտղոյ ձեռաց իւրոց գործէ գերկիր: Գտնի ամեալ հաստատութեամբ ընդ մէջ իւր՝ մըխեաց զբազուկս իւր ի գործ. և նաշակեաց՝ զի բաղցր է գործել, և ոչ շիջանի նրազ ի նմանէ զամենայն զիշեր: Զձեռս իւր ձգէ յօգոստ, և զմատունս իւր անձանձոռոյր տայ իւրոյ: Զձեռս իւր ընդարձակեաց աղբատաց, և կարկառ պտուղ տնանկին: Ոչ ինչ հոգայ ի տանէ կողմանէ այր նորա՝ յորժամ ուրեք յամիցէ. զի ամենեկին որ զնովա են՝ զգեցեալ են կրկին պատմութեանս: Արար առն իւրում բեհեզս և ծիրանիս, և անձին իւրում արկանե-

լիս: Երևելի է ի դրունս այր նորա, յորժամ նստիցի ի ժողովրդեան ի մէջ ծերոց և բնակչաց երկրի: Կտաս արար և վանառեաց, և արկանելիս՝ Քանաւացոց: Զգօրութիւն և զմեծվայելչութիւն զգեցաւ, և ուրախ եղև յաւուրս յետինս: Զբերան իւր երաց չափով և իմաստութեամբ, և կարգ եղ լեզուի իւրում: Պարկեշտ են նաւապարհի տան նորա, և հաց դատարկութեան ոչ եկեր: Եւ ողորմածութիւն նորա կանգնեցին զորդիս նորա և մեծացոցին. և այր նորա զովէ զնա՝ և ասէ, Բազում դատերք ստացան զմեծութիւն, բազում արարին գօրութիւն, բայց դու առաւել եղեր և անցոցեր զամենեկումբ: Սուտ հաւնութիւն և ընդունայն գեղ կնոջ ոչ գոյ ի քեզ, զի կին իմաստուն և բարեպաշտօն օրհնեսցի. զերկիւղածս Տեսան պատուեսցէ նա: Տոյ նմա ի պտղոյ շրթանց նորա, և գովեսցի ի դրունս այր նորա: Զի նաւապարհի առն առաջի երեսաց իւրոց երթիցեն, և աշողեսցին յախտեանս յախտենից:

(Գլուխ ԼԱ, 10—31)





ԱՐԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գարիէլ հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացոց, որում անուն էր Նազարէթ, առ կոյս խօսեցեալ ան, որում անուն էր Յովսէփ, ի տանէ Դարի. և անուն կուսին Մարիամ: Եւ եկեալ առ նա ասէ, Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ: Եւ նա ընդ բանն խոովեցաւ, և խորհէր ընդ միտս քէ որպիսի՝ ինչ իցէ ողջոյնս այս: Եւ ասէ ցնա հրեշտակն, Մի՛ երկնչիր, Մարիամ, զի գտե՛ր շնորհս յԱստուծոյ: Եւ անա յղաւոր և ծնցես որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս: Նա եղիցի մեծ, և Որդի Բարձրելոյ կոչեսցի, և տացէ նմա Տէր Աստուած զարողն Դարի հօր նորա. և քազաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ ի յաւիտեանս, և քազաւորեան նորա վախճան մի՛ լիցի: Եւ ասէ Մարիամ ցնրեշտակն, Զիա՛րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ: Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցնա, Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է ի քեզ՝ սուրբ է, և Որդի Աստուծոյ կոչեսցի: Եւ անա յղիսարեք ազգական քո, և նա յղի է ի ծերութեան իւրում. և այս վեցերորդ ամիս է նորա որ ամուլն կոչեսցեալ էր. զի ոչ տկարացի առ յԱստուծոյ ամենայն բան: Եւ ասէ Մարիամ, Անաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քոմ. և զնաց ի նմանէ հրեշտակն:

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ՝

զնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդայ. և եմուտ ի տուն Զափարիայ և ետ ողջոյն Նղիսարեքի: Եւ եղև իբրև լուսա զողջոյնն Մարիամու Նղիսարեք, խաղաց մանուկն յորովայնի նորա. և լցաւ Նղիսարեք Հոգով Սրբով. և ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ, Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո: Եւ ուստի՝ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս: Զի անաւասիկ իբրև եղև ձայն ողջունի քո յականջն իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում: Եւ երանի որ հաւատայցէ երէ Նղիցի կատարումն ասացելոցս նմա ի Տեառնէ: Եւ ասէ Մարիամ, Մեծացուցէ անձն իմ զՏէր. և ցնծացաւ հոգի իմ յԱստուած Փրկիչ իմ: Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի անա յայսմ հետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք: Զի արար ինձ մեծամեծս Հօրն, և սուրբ է անուն նորա: Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց: Արար զօրութիւն քազկաւ իւրով, ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց: Քակեաց զհօրս յարողոց, և բարձրացոյց զխոնարհս: Զքաղցեալս լցոյց բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս: Պաշտպանեաց իւրայնի ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւնս: Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան: Եկաց Մարիամ առ նմա իբրև ամիսս երիս, և դարձաւ ի տուն իւր:

(Գալիս Ա, 26-56)

